ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 27 >> Հոկտեմբեր 2015թ. N 44

ք. Արմավիր

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի N 1093-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով դասընթացներին մասնակցելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Գրիգորյանին 2015 թվականի հունիսի 1՝-ից 12-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա:
2. Արմինե Գրիգորյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Սրապիոն Մարտիրոսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունիսի 1-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**